

— ոչ թէ կը հնարամտէ, ինչպէս կը կարծէ թե-
թեւօրէն փէշիկեան (Բաղմալէպ, 1928, էջ 299)
— դասական հայերէնի հոգւոյն համապատասխան
հայերէն ընթերցումը (Schmid, Wider die
Sekten, էջ 20), իսկ Բաբգէն, Վենետ. Գ.
ճառընտրին տուած յետնադարեան «Տէր»-ը
կասկածելի «Տէր»-ին վերադասելով կը հար-
ցնէ «արդեօք կարելի չէ... «Տէր»-ը գրչի
սխալ մը նկատել քանի որ «Տէր» ձեւը աւե-
լի շատ գործածուած է միւս օրինակներուն մէջ
(Հանգ. Ամս. 1907, էջ 312): Մայլըն ընթեր-
ցումին ի նպաստ Գալէմքեարեանի դասա-
կան մատենագիրներէ յիշած օրինակները սակայն
այնքան ուժեղ են եւ այնքան պերճախօս, որ հարկ
չի մնար ոչ-դասական Տէրէի մը նախընտրանք
տալու: Արեւելեան Վկայներու նուիրուած ճառն
է որ կը տրամադրէ մեզի առաջին վկայութիւնը՝
«դամնայն աչաւք հայլ մածեալ նոտէր ի սովոյն
(հրարկ. Գ. Տէր-Մկրտչեան, էջ 42, Վենետ.,
էջ 92), իսկ երկրորդը Բարսեղի Վեցօրեայն՝ «եւ
ունիցի հայլ զարեգալն յամպոց (այլ. ապմոց)»,
էջ 115: Այս ընտրանքով Եղնիկի հաստուածին
միտքն ալ կը բարեփոխուի բնականաբար եւ կը
ստանայ պայծառ իմաստ, քանի որ avec հայերէն
«brouillard, brume», le verbe շողայցեն de շո-
ղա՝ «briller», se comprend à peu près, et
on pourrait traduire la fin de la phrase ainsi:
«... le brouillard qui fait halo autour des pu-
pillles ... à peu près comme traduit Schmid»,
... die Nebel, welche um die Augenäpfel
schimmern (L. Mariès, անգլ. էջ 175):

Ո՛րքան շնորհաւորելի է Շրջիկը, որ դուր-
գէնեան գոտաւանդութիւնը պահած է անսխալ
ու վերյիշած այնքան գեղեցկօրէն իր ծաղկէ ծա-
ղիկ թափառումներուն մէջ:

Հ. Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ



ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

ՓԹՐԱՆՔՆԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԼՆԵՐ ԲԱՆԱՀԻՍՈՒԹԻՒՆԻՑ

Մարգուանի տնտեսական եւ քաղաքական կեանքի
նորագոյն պատմութեան ուրուագիծը: — Պատասխի-
կներ Մարգուանի, Բայազիդի, Ալաշկերտի, Շիրակի
հայ ժողովրդական բանահիւսութիւնից:

Ա.

Մարգուանի նորագոյն պատմութեան
ուրուագիծը:

Մարգուանը, Փոքր-Հայքի Պագեմոն
քաղաքը, Սեբաստիոյ նահանգի գաւառնե-
րից մէկն է: Փռուած է մի ընդարձակ բլրա-
դաշտի վրայ եւ իր դիրքով ներկայացնում
է բաւական գեղեցիկ մի տեսարան: Համաշ-
խարհային պատերազմից առաջ այդ քա-
ղաքը դրական զարգացման կարեւոր մի
կենդրոն էր դարձել եւ տնտեսական առ-
տիճանական նուաճումներ էր գործում,
շնորհիւ օրէց օր ծաղկող արհեստների եւ
արդիւնաբերութեան:

1914 թուականից առաջ այդտեղ ապրում
էր մօտ 14.000 հայ եւ 3400 յոյն աշխատող
եւ արտադրող մի ժողովուրդ, որը կանդ-
նած շինարարական ստեղծագործութեան
առաջ, իր աշխատող բազուկներով զարկ էր
տալիս երկրի տնտեսական եւ կրթական
կեանքին:

Այդ շարժումն առանձին փայլ ստացաւ
նա մանաւանդ 1908 Յուլիս 11ի օսմանեան
սահմանադրութիւնից յետոյ, որն իր առ-
աջադրմական հոսանքներով ներդրածա-
կան դեր էր կատարում ժողովրդի կեան-
քում: Ահա այդ տեսակէտից ուշադրաւ է
յիշեալ շարժումը: Բայց նախ քան այդ յե-
ղաշրջման պատմութեան անցնելը՝ համա-
ռօտակի ընդգծումներով տեսնենք, թէ ի՞նչ
պատկեր էր ներկայացնում Մարգուանի եւ
առհասարակ ներքին գաւառների ժողովրդի
կեանքը 1908 թուականից առաջ:

Մարգուանում, ինչպէս եւ թիւրքիոյ
ներքին գաւառներում, 1908 թուականից առ-
աջ համարեա թէ չկար տնտեսական եւ

քաղաքակրթական նշանակալից շարժում, շնորհիվ Սուլթանի Համիդեան գերիշխանութեան, որ իր քաղաքական ստրկութեան ծանր շղթաներով իշխում էր հայ, յոյն եւ թիւրք աշխատաւոր ժողովրդի սրտի ու մտքի վրայ: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ ազատ խօսքը, միտքը, առաջադիմական մտաւոր շարժումը եւ վերանորոգչական հոսանքը խիստ եւ անխնայ հալածւում էր եւ կաշկանդւում սուլթանական զարհուրելի յետադիմութեան ստեղծած երկաթէ կապանքներով: Նոյն իսկ գրականութիւնը, շնորհիվ Համիդեան հեղձուցիչ րէ-ժիմի, ապրում էր խիստ ծանր օրեր: 1880 թուականից յետոյ Համիդեան գրաքննութիւնը զօրեղ պատնէշ էր կառուցել կեանքի եւ գրականութեան մէջ եւ անօրինակ խստութեամբ խեղդում էր մամուլն ու գրականութիւնը: Պոլսում որեւէ պարբերական հանդէս տպագրուելուց առաջ ենթարկւում էր գրաքննիչի խստութեան եւ դաժանութեան: Այդպիսի հանգամանքներում լրագրին ու գիրքը կորցրել էին իրենց նշանակութիւնը: Այսպէս էր իրականութիւնը սուլթանի մայրաքաղաքում: Ինչպէս էին սակայն հանգամանքները դաւառնելում: Չափազանց անմխիթարական էր պատկերը եւ ներքին շրջաններում: Յետադիմութիւնը եւ զաւառամասերում ժողովրդին պահում էր ո՛չ միայն քաղաքական-տնտեսական ստեր-ո՛չ միայն քաղաքական-տնտեսական ստեր-կութեան մէջ, այլ եւ չէր թոյլատրում որեւէ լրագիր կամ պարբերական հանդէս լոյս ընծայելու: Նոյն իսկ արգելուած էին թատրոնական ներկայացումները, ժողովրդական դասախօսութիւնները, ընկերական-գրական երեկոյթներն ու հանդէսները: Ինչ-Ամէն ինչ մոռալ էր, սեւ, հիւանդոտ: Ինչպէս ինքը սուլթանական դաժան յետադիմութիւնը:

Այդ ծանր եւ անողոք դրութիւնը տեսեց աւելի քան 25 երկար տարիներ անընդհատ:

1908 թուականից յետոյ սակայն թիւրքիայում սկսեց մի նոր դարաշրջան: Շնորքիւյում սկսեց մի նոր դարաշրջան: Շնորհիվ հիւ Յուլիսեան յեղափոխութեան մի հին կեանք կործանուեց հիմնայատակ կերպով եւ նրա աւերակները վրայ կառուցուեց մի նոր կեանք, որը, տարաբախտաբար, հազիւ վեց տարուայ շրջան բոլորեց:

Այդ նոր շարժումը Մարգուանում ունի

իր պատմական կեանքը, որի մասին ուզում ենք երկու խօսք ասել:

Մարգուանի ժողովրդի նորագոյն վերածնութիւնը կարելի է գծել երկու շրջանակներով-տնտեսական եւ քաղաքակրթական:

Տնտեսական շարժման արտայայտութիւնները Մարգուանում թէեւ սկսում են 90ական թուականից, սակայն առանձին դարկ են ստանում 1908ի սահմանադրութիւնից յետոյ, շնորհիվ առեւտրական եւ արդիւնաբերական այն ազատ յարաբերութիւնների, որ սկսեց 1908 Յուլիս 11ից յետոյ: Այդ ժամանակաշրջանի մանիսագործութիւնը, որ կարելի էր համարել Մարգուանի ժողովրդի տնտեսական կեանքի առաջնակարգ ազդակներից մէկը, հասել էր իր ծաղկման բարձր աստիճանին. բազմաթիւ հայ եւ յոյն ընտանիքներն իրենց տնտեսական կեանքը բարելաւում էին միայն ուստայնագործութեամբ: Ջուլհակացիներից արտադրուած ապրանքները, որոնք աչքի էին ընկնում իրենց դիմացկունութեամբ եւ գեղարուեստական պարզութեամբ, Մարգուանից հարկւրաւոր հարկերով արտահանւում էին Թիւրքիոյ զանազան քաղաքները — Սամսոն, Ամասիա, Չորում, Եոզ-Պաշա, Ակն, նոյն իսկ մինչեւ Էնկիլարի (Գաղատիա) եւ ամենակարճ ժամանակաշրջանում սպառւում:

Մանիսագործութիւնից յետոյ Մարգուանում նշանաւոր տեղ էր գրաւում պղնձագործութիւնը, որ կարեւոր դեր էր խաղում ժողովրդի տնտեսական կեանքում: Մօտաւորապէս 400 հայ պղնձագործներ իրենց ինքնուրոյն արհեստով պատրաստում էին պղնձէ այնպիսի ամաններ, որոնք կարող էին մրցել եւրոպական արտադրութիւնների հետ: Այդ ապրանքները Մարգուանից կարաւաններով փոխադրւում էին Թիւրքիոյ ներքին քաղաքներն ու աւանները: Միջին հաշուով իւրաքանչիւր շաբաթ արտահանւում էր 8—1000 օսմ. ոսկու պատրաստ ապրանք:

Մարգուանի տնտեսական կեանքում պատուաւոր տեղ էր գրաւում եւ ոսկերչութիւնը, որ կենդրոնացած էր միայն հայերի ձեռքում. նրանք պատրաստում էին արեւելեան եւ եւրոպական ճաշակով ոսկեղէն ու արծաթեղէն բաւական նուրբ քանդակագործուած զարդեր, ամաններ, որոնք

արուեստի տեսակէտից օրէց օր հասնում էին իրենց զարգացման աստիճանին: Իբրեւ տնտեսական ազգակ յիշատակենք եւ կօշկարութիւնը, որով զբաղւում էին թէ հայերը եւ թէ թիւրքերը: Աչքի էին ընկնում, սակայն, հայ կօշկարները, որոնցից մի քանիսը կարող էին մրցել եւրոպացի արհեստավորներին հետ: Էլ չենք խօսում վաճառականութեան մասին, որը տնտեսական ասպարիզում օրէց օր նշանակալից նուաճումներ էր անում: Մարդուանցի հայ եւ յոյն վաճառականները առեւտրական սերտ յարաբերութեան մէջ էին Մանհեստրի, Լոնդոնի, Բերլինի, Պարիսի առեւտրական տներին հետ: Չենք յիշատակում եւ այգեմշակութիւնը, որ Մարդուանի աշխատաւոր ժողովրդի տնտեսական կեանքում պակաս դեր չէր խաղում. բազմաթիւ ընտանիքներ այգեստաններից ստացած սեւ եւ սպիտակ խաղողներից պատրաստում էին ընտիր գինի, օղի եւ զանազան տեսակ անուշեղէններ, որոնցից առանձնապէս յայտնի է «պէգմէզը»: Չենք յիշատակում տնտեսութեան միւս կարեւոր ճիւղերը, օրինակ, հացագործութիւնը, մսավաճառութիւնը եւ այլն, որոնք ժողովրդի տնտեսութեան գլխաւոր աղբիւրներն էին:

Ահա մի այսպիսի պատկեր էր ներկայանում Մարդուանի Հայ եւ Յոյն ժողովրդի տնտեսական կեանքը 1914 թուականից առաջ: Այդ ժողովուրդն իր արիւն-քրտինքով կեանք էր տալիս երկրի տնտեսական արդիւնաբերութեանը: Չնայելով սակայն դրան՝ նա տնտեսական ասպարիզում չէր կարողանում առաջնակարգ եւ նշանակալից նուաճումներ կատարել, որովհետեւ հեծում էր անասելի հարկերի ներքոյ: Սուլթանական կառավարութեան դատարկապորտ փաշաներն ու վալիները, պորտաբոյժ նահանգապետներն ու փոլիսները, որոնք ոչ միայն չէին աշխատում, չէին արտադրում, այլ եւ յղփանում էին աշխատաւոր ժողովրդի հալալ վաստակով, հարկերի անունով խաւարի մէջ անասելի ոճիրներ էին գործում եւ տնտեսապէս ստրկացնում աշխատաւոր ժողովրդին:

Մարդուանի հայ ժողովուրդը գրական եւ քաղաքակրթական ճակատում աչքառունուաճումներ սկսեց անել 1908 թուի Յուլիսեան յեղափոխութիւնից յետոյ: 1908—1914 թուականը Մարդուանի հայ ժողովրդի

գրական վերածնութեան ամենաիրաւուն շրջանը կարելի է համարել: Այդ շրջանումն էր, որ սկսեց մտաւոր մի այնպիսի շարժում, զոր երբեք չէր տեսել Մարդուանի պատմութիւնը: Այդ շարժումը արմատապէս յեղաշրջեց տիրող մոռյալ իրականութիւնը եւ ժողովրդի հոգեբանութիւնը:

Ժամանակաշրջանի քաղաքակրթական ամենանշանաւոր երեւոյթները կրթական հաստատութիւններն էին, որոնց շարքում առաջնակարգ տեղ էր դրաւում ամերիկեան միսիոնարների «Անատոլիա կոլէճը», որն իբրեւ կրթական հաստատութիւն, կարելի է ասել, միակ լուսաւոր փարոսն էր ողջ Փոքր-Հայքի ընդհանուր մոռյալ խորքի վրայ: Այդ պատկառելի հաստատութիւնը, որ մարդկութեան տուել է իր ծոցից մի քանի կրթուած սերունդներ, գործական դեր է կատարել ոչ միայն Մարդուանի, այլ եւ Փոքր-Հայքի ժողովրդի մտաւոր առաջխաղացման եւ ինքնագիտակցութեան դործում: Այդ դպրոցն էին գալիս թիւրքերոյ զանազան դասուներից — Ամասիայից, Չորումից, Կեսարիայից, Վանից, Ակնից, Բինկիանից, Նրզնկայից եւ այլ հեռաւոր հորիզոններից, ուսման կրակով վառուած, Հայ, Յոյն եւ թիւրք (քիչ թուով), բազմաթիւ ուսանող-ուսանողուհիներ, որոնց թիւը հասնում էր մօտաւորապէս 1000 հոգու: Այդ ուսանողներից շատերն անուն վաստակեցին զանազան ասպարէզներում, որոնցից յիշտակենք միայն տարաբախտ քնարերգակ — բանաստեղծ Միսաֆ Մեծարեցը:

Անատոլիա կոլէճից յետոյ Մարդուանի կրթական հաստատութիւնների շարքում նշանաւոր տեղ էր գրաւում «Ս. Սահակեան» Խոտաի բարձրագոյն 8 դասեան դպրոցը, ուր դասախօսում էին 14 ուսուցիչներ եւ ուսանում մօտաւորապէս 400 հոգի աշակերտներ: Յիշեալ դպրոցի կողքին կանգնած էր «Ս. Հռիփսիմեան» օրիորդաց դպրոցը 12 ուսուցչուհիներով եւ 300 աշակերտուհիներով: Յիշատակենք եւ Փրանսացի Փրէշների կոլէճը, բողոքականների ու կաթոլիկների վարժարանները, ուր աշակերտաշակերտուհիների թիւը հասնում էր մօտաւորապէս 600ի:

Դպրոցական կեանքի առաջխաղացման հետ, Մարդուանում, 1909 թուականից յետոյ սկսեց եւ գրական մի նոր կեանք: Քաղաքում գոյութիւն ունէին երկու տպարան-

ներ, որոնցից լոյս էին տեսնում մի շարք զրբեր, բրոշիւրներ, ժողովրդական երգարաններ, այլ եւ հրատարակում էին երեք պարբերական հանդէսներ՝ «Հայկունի» (1910—1912) խմբագրութեամբ զրադէտ-բանասէր Գաբրիկ Օզանեանի, «Նոր-Այգ» (1910—1914)՝ Գէորգ Կիւլիանի (Անատոլիա կոչւած) եւ «Բողբոջ» (1911—1914)՝ մանկավարժ-բանաստեղծ Մամիկոն Վարժապետեանի:

Բովանդակութեան կողմից այդ թերթերը բաւարար էին: Նրանց մէջ անդրադառնում էին ժամանակակից նշանակութիւն ունեցող գրական իրաւներն ու իրէպլները: Տպւում էին պատմական, բանասիրական ուսումնասիրութիւններ, գիտական յօդուածներ, գրական-քննական վերլուծութիւններ, գրախօսականներ, ամսուայ քրոնիկներ եւայլն: Զիշտ է, որ գրական այդ հանդէսներն առաջադիմական նոր հոսանքներ առաջ էին բերում, բայց իրենց նպատակներով ուղղութիւն էին տալիս ժողովրդի մտաւոր կեանքին, յեղաշրջում նրա աշխարհայեացքներն ու զգացումները. համարձակ կարող ենք ասել, որ Փոքր-Հայքի գրական շարժումը, նա մանաւանդ բանաստեղծութիւնն ու բանասիրական գրական նութիւնը, անխզելի կերպով կապուած են այդ թերթերի հետ, եթէ միայն նկատի առնենք Ամասիայում լոյս տեսնող Լեւոն Հարենցի «Ապառաժ» (1911) եւ «Ամասիա» (1911) թերթերը:

Մարզումանի ժողովրդի քաղաքակրթական շարժման զարկ էին տալիս եւ ժողովրդական լսարանը (հիմնուած Գաբրիկ Օզանեանի ջանքերով), գրադարան-թերթ-ցարանները¹, բարեգործական ընկերութիւնները, որոնք իրենց նպատակներով ծառայում էին ժողովրդի ինքնագիտակցութեան եւ ինքնաճանաչութեան գործին:

Ահա Մարզումանի այդ մի բուռն աշխատասէր, ընդունակ, ժողովուրդին էր, որ 1915 թուի պատերազմի ժամանակաշրջանում,

նում, Թալաթ-Խնկէրական կառավարութեան սարսափելի խժոժութիւններով բնաջնուեց սարերում եւ ձորերում. եւ այսօր այնտեղ 14.000 հայ եւ 3—400 յոյն ազգաբնակչութեան փոխարէն ապրում են միայն 300 հայ եւ յոյն կանայք, որոնցից շատերն իրենց գոյութիւնը պահպանում են իրրեւ թրջացածներ:

Այդ տարաբախտ ժողովրդին են պատկանում բանահիւսութեան այն մի քանի պատուիրները, որոնք չընկած են այսօր մնացորդ բեկորների շրթերում: Այդ ժողովուրդն օժտուած էր վառ, գունագեղ երեւակայութեամբ: Նա իր աշխատանքի պահուն հիւսում եւ ստեղծագործում էր մի շարք երգեր, պատմում հեքիաթներ, առասպելներ: Այդ երգերը կառուցւում էին գլխաւորապէս ջուլհականոցներում: Գործաւորները տեղկեահներ (մեքենաների) առջեւ, հորերումը նստած, մաքուր ներդաշնակ զարկերի հետ՝ յանպատրաստից կերտում էին մի շարք հայկերէն եւ թուրքերէն երգեր եւ քաղցր, դիւրեկան ձայնի ելեւէջներով գեղեցիկ: Այդ երգերի մէջ պատկերացնում էին նրանք իրենց չարքաշ աշխատանքը, տնտեսական ծանր դրութիւնը, թշուառութիւնը: Այդպիսի անտիպ երգերից մինչեւ օրս դեռ վառ է մեր յիշողութեան մէջ թրքերէն երգի մի փշրանքը, որ հիւսել եւ երգում էին մեր տան ջուլհականոցի աշխատաւորները.

Վերեսից վերսես
Տեղիկիկիկի ջաթմալը²:

Այսօր չկայ այդ ժողովուրդը, բայց կայ նրա սրտի եւ հոգու մի քանի էջերը, որոնց մէջ դուք կարդում էք նրա զգացումներն ու յոյզերը, նրա մտահայեցողութիւններն ու տրամադրութիւնները: Գաղափար էք կաղմում ոչ միայն նրա բանաստեղծական ճաշակի, այլ եւ նրա բարատի, լեզուի, ոճի, տաղաչափական ա-

¹ Մանաւոր յիշատակութեան արժանի է «Ս. Սահակեան» զարդի «Օգնիկեան» մատենադարանը, որ կառուցուեց Մանուկ Օգնիկեանի ջանքերով: Նա համեստ մի կօշկարի նիւթական միջոցներով: Նա համեստ մի արամազրում էր եւ նոր հրատարակման տարի արամազրում եւ նոր հրատարակման տարի կաղմում եւ նոր հրատարակման տարի կաղմում: Մատենադարանն ունէր 10 օսմ. ոսկի գրքեր կաղմում եւ նոր հրատարակման տարի կաղմում: Մատենադարանն ունէր 1000 հատոր հայերէն գրքեր, որից օգտուած էին «Ս. Սահակեան» եւ «Հոփփիկեան» զարդիները: Նա կերտեալ-աշակերտութիւնները եւ քաղաքացիները:

² Տառապող, չարքաշ աշխատաւորը շատ անգամ էք կարողանում իր տնտեսական կարիքները հնչուն դրամով հոգալ, որով ստիպուած ապառիկ էք դնում: Պարտքը շատ անում էր եւ խանութէր պանը էլ գործաւորին ապառիկ ապրանք էք տալիս: Այդպիսի պահերում աշխատաւորն իր յոյսը դնում էր իր բազուկների, իր աշխատանքի վրայ եւ կըրգում: «Եթէ ապառիկ կու տայ, պէտք է տէգիկէ-ներին ոյժ տալ», այսինքն՝ գիշեր, ցերեկ աշխատեմ, արիւն քրտնեմ թափեմ:

լուստալի մասին, որոնք այդ մի քանի պատուիրներում ա՛յնպէս ցայտուն գոյներով ցոլանում են ձեր առաջ:

Այդ երգերը թէեւ իրենց հիւսուածքով անարուեստ եւ պարզ բանաստեղծութիւններ են, սակայն նրանք հարազատ են եւ գրուած են ինքնայատուկ ոճով ու գունաւորումներով: Նրանց մէջ իշխողն արեւելեան պատկերաւորութիւնն ու պարզութիւնն է, ուր սակայն զգացում կայ, ազնուութիւն կայ, գոյն կայ: Այնտեղ յանգերի չափը բաւական յաջող է, լեզուն՝ պատկերաւոր, իսկ ոճը՝ սահուն:

Տարաբախտաբար այդ երգերի յօրինման իսկական ժամանակաշրջանը յայտնի չէ մեզ, այնպէս որ ո՛չ կարող ենք նրանց մասին առարկայական եզրակացութիւններ անել, ո՛չ էլ նրանց դարեւրջանի պատկերը ճշտութեամբ դնել: Այդ հանգամանքներն ու երեւոյթները կարելի է պարզաբանել միմիայն գրաւոր տուեալներով եւ տարբերակներով: Թերեւս բանասիրական հետազոտութիւնները եւ ժամանակաշրջանը մի օր կարողանան լուծել այդ հարցերը: Այժմ առաջ բերենք եղած պատուիրները, ցոյց տալու համար զեղեցկութիւնը մեզ հարապատ ժողովրդական բանաստեղծութեան:

Բ.

Մարգուանի ժողովրդական բանաստեղծութիւնից:

1. Սիրերգներ:

Մարգուանի հայ ժողովրդական բանաստեղծութեան գոյտրիկ ու սիրուն փշրանքներից մէկն է «Ծով-ծով աչկե» խորագրով սիրերգը, որ աչքի է ընկնում իր պարզ պատկերաւորութեամբ եւ զգացումի անկեղծութեամբ: Թէ ե՞րբ է կառուցուել այդ սիրերգը եւ ի՞նչ առիթով, այն մեզ յայտնի չէ: Նրդի եղանակը մեղմ է, ներդաշնակ ու տպաւորիչ: Առաջ բերենք սիրերգը ամբողջութեամբ.

Ծով-ծով աչկե, քիբրիքներուդ ³ շահ ⁴
կու տայ,

Ըրած նաղդ քախքր սիրտիս ցաւ կու տայ:

³ Արտեւանունք:

⁴ Փայլ:

Պօյդ ⁵ էրկան ⁶ Ֆէսլիեանին ⁷ կըմանիս,
Ջահիլներուն ⁸ խելքը կլխէն ⁹ կըտանիս:

Վարդ պացվէր ¹⁰ են կարմիր-ճերմակ
թուշերդ ¹¹,
Փնտուելով էս ¹² չի կտայ ընկերդ:

Էրէսդ ¹³ պայծառ, արեգակի լոյսի պէս,
Օր մը դուն ալ կըթօմշկիս ¹⁴ վարդի
պէս:

2. Օրօրեքեր:

Մարգուանի հայ ժողովրդական գրականութիւնից մեր ձեռքի տակ ունենք նաեւ երկու գոյտրիկ օրօրեքեր, որոնք թէեւ տաղաչափութեան արուեստի տեսակէտից թոյլ են, բայց իրենց հիւսուածքով եւ բովանդակութեամբ բաւական բանաստեղծական են: Այդ երգերի մէջ հայ մայրն արտայայտում է իր աղիւղ ձագուկի հանդէպ տածած հոգեկան զգացմունքները: Այսպէս, նիրհում է մանկիկն անուշ քունով, մայրը նրան դնում է օրօրոցում եւ մեղմ դիւրեկան ձայնով երգում.

Պար-պար անիմ, օրօր անիմ,
Առնիմ եայլաներ ¹⁵ տանիմ.
Պաղուկ ¹⁶ ճուրեր ¹⁷ խմցունիմ,
Կաթով զայմախ ¹⁸ կերցունիմ:

Պար-պար, պար-պար, պարամպար,
Էկօ ¹⁹ հայրիկը եայլան տար.
Չէ, չէ, չեմ տար, պղտիկ է,
Երբ ²⁰ մեզնա ²¹ ետկը տար:

Տան-տան անիմ տաները,
Մեռնի ասոր ²² աները.

- ⁵ Հասակ:
⁶ Երկար:
⁷ Մարգուանի զեղադէմ երիտաւարներին
մէկը:
⁸ Երիտասարդ:
⁹ Գլխից:
¹⁰ Բացուել:
¹¹ Այտեր:
¹² Ես:
¹³ Երեսդ:
¹⁴ Կը թառամես:
¹⁵ Բարձրաւանդակ:
¹⁶ Սառ:
¹⁷ Ջրեր:
¹⁸ Սեր:
¹⁹ Արի:
²⁰ Երբ որ:
²¹ Մեծանայ:
²² Սրա:

Մէրէս²³ մընա խաները²⁴,
Ծախէ, ուտէ մալերը²⁵:

Տան-տան անիմ, տան անիմ,
Պար-պար անիմ, ճօր անիմ.
Կապան կռիմ, չօր անիմ,
Մեղնանէ հարսնիք անիմ:

Վարպետ²⁶ կէրթայ նազերով,
Չանդան²⁷ իլլիք²⁸ թուղերով.
Սրմայի պէս մազերով.
Ասպէս²⁹ աղջիկ վո'վ³⁰ ունի,
Անկաճը³¹ օսկի օղ ունի:

Այս օրինակ դողարիկ մի օրօրերդ է
նաեւ հետեւեալ փշրանքը.

Օրօցքն արմաղ³², կամարն օսկի,
Պէջիկն արծաթ, վրան հայլի
Սիրուն ձագս անուշ քնի,
Վարդի հոտով քունը տանի:

Օրօ՛ր ձագս, պարպար անեմ,
Անուշ քունով կշտացունեմ,
Օրօրոցով մենծացունեմ.
Օրօ՛ր նանիկ, նաչխուն դառնիկ,
Իմ ձագուկս է մէկ հատիկ:

Այժմ մանկիկը դարթել է, մայրը լո-
ղացնում է նրան եւ միաժամանակ դովքն
անում.

Ծով-ծով աչկեր,
Կամար ունքեր,
Մարմար ձակատ,
Սիրուն բերան,
Մարքարիտ ակռա,
Սրմայ մաղիկ,
Իմ ձագուկս է
Մէկ հատիկ:

3. Մանկական երգեր:

Մանկական քնարից ունինք միայն եր-
կու պատառիկներ, որոնցից առաջինի մէջ

մանիկը պարզ գոյներով պատկերացնում է
տիրող թշուառութիւնն ու աղքատութիւնը,
այսպէս՝

Անճրեւ կու դայ, ճուն³³ կու դայ,
Տէրաէր պապիկ տուն կու դայ.
Փիլաւ էփիմ եղ չի դայ,
Քէլ³⁴ թաթոսին տեղ չի դայ:

Երկրորդի մէջ աղջիկն երգում է իր
սէրը.

Ասոր³⁵ կիրակի է, ծաղիկ քաղելու է,
Ծաղիկը տանիմ, տէրաէրին տամ.
Տէրաէրն ընծի նշխարք տայ,
Նշխարքը տանիմ չոպանին տամ,
Չոպանն ընծի օջիւար³⁶ տայ,
Օջիւարը տանիմ Աստծուն տամ,
Աստուած ընծի ախպար³⁷ տայ:
— Ախպար, ախպար, վո'ւր³⁸ կերթաս.
— Ան աղջկայ տուն կ'երթամ.
— Ան աղջկան ի՞նչ ընես.
— Ընծի համար եար ընեմ.
— Էս³⁹ ալ օջիւարներուն կէր⁴⁰ կու տամ,
Չոպան աղին սէր կու տամ:

Ահա սրանք են Մարգրուանի հայ ժո-
ղովրդական բանահիւսութեան պատառիկ-
ները, որոնք դրի առինք 1924 թուին, Բեր-
լինում, մնացորդ բեկորների շրթերից⁴¹:

Գ.

Բայազիդի հայ ժողովրդական բանահիւ-
սութիւնից:

Բայազիդի հայ ժողովրդական բանա-
հիւսութեան մէջ մի ուշադրաւ տեղ է
դրաւում «էս ի՛նչ կրակ ա» խորագրով
տաղը, որը ձեռք բերինք 1916 թուին, Նոր-
ջուղայում, 1880 թուին գրուած ձեռագիր
մի հին տաղարանից:

³³ Զիւն:

³⁴ Ճաղատ:

³⁵ Ասոր:

³⁶ Օջիւար:

³⁷ Եղբայր:

³⁸ Ուր:

³⁹ Ես:

⁴⁰ Կերակուր:

⁴¹ Այդ անտիպ երգերը հաւաքելիս օգնել է
մեզ պ. Մարգրուանցի Պարոյր Քիրէմիտեանը, որին
յայտնում ենք մեր ջերմագին շնորհակալութիւն-
ները:

²³ Ժառանգ:

²⁴ Իջեւանատեղի, պանդոկ:

²⁵ Ապրանքները:

²⁶ Գպրոց:

²⁷ Պայուսակ:

²⁸ Լեցուն:

²⁹ Էսպէս:

³⁰ ով:

³¹ Ականջ:

³² Թանկագին քար, դոնար:

Այդ տաղը ցայտուն պատկերն է այն զարհուրելի աղէտին, որ 1877 թուի Յունիս ճին, ոռւմբի նման, յանկարծ պայթեց Բայազէդի հայ ժողովրդի գլխին եւ տեւեց 23 երկար օրեր:

Դա Ռուս-թրքական պատերազմի այն ժամանակաշրջանն էր, երբ Ռուս բանակի առաջխաղացումը, իրերի դասաւորութեամբ, Հայաստանում յանկարծ ձախողուեց: Դրանից յետոյ տեղական մահմեդականները, որ սկզբում ընդունել էին ռուսներին գերիշխանութիւնը, նորից ապրտամբւում են եւ միանալով իսմայէլ Փաշայի կանոնաւոր զօրքերի եւ խառնիճազան թաշիրողունների հետ, պաշարում են Բայազէդը, որ գտնւում էր բերդապահ Բշտովիչի պահպանութեան ներքոյ:

Այնուհետեւ բացւում է մի սոսկալի տեսարան: Թշնամու բանակը կրակի է տալիս Բայազէդը. ողջ քաղաքը ծխում է հուրբոցերի մէջ. այրւում են մանուկները, խելակորոյս մայրերն աղիողորմ ճչում են ու լալիս: Թափւում են գնդակները կարկառի նման եւ ընկնում 500 ջահէլիւաններ: Հայերից մի փոքրիկ մաս միայն ազատւում է փախչելով սահմանակից պարսկական Մակու քաղաքը:

Ահա պատմական այդ յուզիչ դէպքը, որի մասին վիպասան Բաֆֆին «Սենթ» խորագրով մի ամբողջ վէպ է գրել, հայ ժողովուրդն ամփոփել եւ սեղմել է եօթը տներից բաղկացած մի բանաստեղծութեան մէջ, որ արժէքաւոր է ոչ միայն իր պատմական կառուցուածքով, այլ եւ իր ժողովրդական ոգով եւ հիւսուածքով:

Ամբողջ ոտանաւորը սիրտ կտրատող յուզիչ մի պատկեր է, դժուած ժողովրդական վրձինի անպաճոյճ դոյներով: Այնտեղ ձեր աչքերի առաջ շարան-շարան անցնում են մի շարք մռայլ տեսարաններ: Ահա նրանց խելակորոյս մայրերը, որոնց աղիողորմ ձայները երկինք է բռնել: Ահա եւ արիւնաթաթախ գետին փռուած 500 ջահէլիւները, որոնք մնացել են անդադաղ:

Կարգում էք տաղը եւ մնում նրա խոր ազդեցութեան ներքոյ: Ահա պատմական այդ տաղը:

Էս ի՛նչ կրակ ա, Տէր-Աստուած,
Ա՛յ հավար⁴², Բայազէդ վառեցին.
Մատղաչ ձօթերն⁴³ են էրած,
Ա՛յ հավար, սեւ խաբար⁴⁴ էրեցին:

Ճելոքն⁴⁵ էկան ամպի պէս,
Ա՛յ հավար, սեւ խաբար զարմներ⁴⁶.
Գիւլէն⁴⁷ թափեն կարկառի պէս,
Ա՛յ հավար, Բայազէդ կտրեցին:

Մէր⁴⁸ մանուկն կուրանայ,
Ա՛յ հավար, սեւ օրեր, սեւ հողեր.
Արին⁴⁹ առուի պէս կ'երթայ,
Ո՛վ Աստուած, ա՛յ հավար, վառեցին:

Բոցեր կ'ելին վեր ու վեր,
Ա՛յ հավար, սեւ խաբար միլիցին⁵⁰,
Ձէներն երկինք ա լցուեր,
Ա՛յ հավար, միլիցին վառեցին:

Ա՛խ, հինգ հարիւր էլ քաջ կտրիճ,
Ա՛յ հավար, վա՛յ հասէ՛ք, վառեցին.
Ամենքն ինկած քաջ կտրիճ,
Ա՛խ ախոս՛ս, վա՛յ կսկիճ, վառեցին:

Ամենքն մնացին անդադաղ,
Էս ի՛նչ կրակ ա, էս ի՛նչ բոց.
Չինար բոյին⁵¹ ձեր մատաղ,
Ա՛յ հավար, սեւ օրեր, սեւ հողեր:

Ձեր սգաւոր մայր մեռնէր,
Էս⁵² սեւ օրեր չտեսնէր.
Ա՛յ հավար, սեւ օրեր, վառեցին,
Էնոնց սրտեր կտտրուէր:
Ա՛յ հավար, միլիցին գիւլեցին,
Ա՛խ Աստուած, սէլորներ կտրեցին:

Դ.

Ալաշկերտի հայ ժողովրդական բանահիւսութիւնից:

Ալաշկերտի հայ ժողովրդական գրականութեան գողարիկ փշրանքներից մէկն է

42 Սուգ ու շիւան:

43 Մանուկներ:

44 Լուր:

45 Վանայ վելայէթի քրդերը:

46 Արիւնաբոյ:

47 Գնդակ:

48 Մայր:

49 Արին:

50 Անկանոն:

51 Հասակ:

52 Այս:

«Նարինո» պարերգը, որ այնքան տարածուած է Վասպուրականի, Շիրակի, Բորջալուի, Խնուսի եւ այլ գաւառներում:

Թէեւ յիշեալ պարերգը Ալաշկերտի հայ ժողովրդի ստեղծագործութիւնն է, բայց տարաբախտաբար, բարբառը չէ պահպանած իր հարազատութիւնը: Այդ հանգամանքը պիտի բացատրել նրանով, որ Ալաշկերտում ապրում են ռուս-տաճկական պատերազմների ժամանակ գաղթած բազմաթիւ տաճկահայեր, որոնք դրել են իրենց կենդանի տեղական ժողովրդական երգերի վրայ: Պարերգը ապրելով մի երկու սերունդ այդ գաղթական ժողովրդի մէջ՝ կորցրել է իրայատուկ հնչաբանութիւնը, շեշտը, առողանութիւնը: Ահա թէ ինչու յիշեալ պարերգը տարբեր ոգու, ոճի եւ բարբառի մի կատարեալ խառնուրդ է ներկայացնում: Երգում նկատելի են Ալաշկերտի, Շիրակի, Վասպուրականի գաւառաբարբառներից ոճեր եւ բառեր: Սակայն չնայելով դրան՝ պարերգի ընդհանուր կառուցուածքը հարազատ է:

Այդ պարերգն իր ոգով, իր գոյնով եւ իր ելեւէջներով ներկայացնում է մի ամբողջ աշխարհ, ուր ցայտուն գոյներով ցոլանում է ձեր առաջ արտադրող դասակարգի հոգեբանութիւնը:

Երաժշտութեան տեսակէտից պարերգը թրքական-պարսկական ոգի ունի: Իշխողը թրքական-պարսկական է պարը: Այնչափն է, որը եւ ղեկավարում է պարը: Այնտեղ կան ազատ եւ համարձակ թուրքներ, որոնք սկսում են հանդարտ, համաչափ երանգներով ու հետզհետէ արագ թափ են ստանում: Առհասարակ պարերգի չափերը փոփոխական են, իսկ ոգին ուրախ է, վառ-վռուն ու հերոսական:

Այս պարերգը գրել առինք Ապարանցի Յովհաննէս Յակոբեան անունով ութսուհամեայ անդրադէտ մի գեղջուկի շրթերից, որը երկար տարիներ ապրել է Ալաշկերտում: Ահա այդ գողարիկ պարերգը:

Նարինո՛ 53 ջան, փինջանո՛ 53, հէ՛յ ֆին-
ջանո՛ 53,
Նարինո՛ ջան, ֆինջանո, հո՛յ փինջանո,
Նա՛յ-նա՛յ, հո՛ւ-նա՛յ, փինջանո, ջա՛ն
Նարինո:

Նարինո՛ ջան, փինջանո, հէ՛յ ֆինջանո,,
Գեարուն 54 ա բացվէ կանաչ նաշտուն 55,
փինջանո,

Սարեր, ձորեր կանաչ ին հագի, Նարինո,
Նա՛յ-նա՛յ, հո՛ւ-նա՛յ, փինջանո, ջան
Նարինո:

Նարինո՛ ջան, փինջանո, հէ՛յ ֆինջանո,
Եարս կու գայ խումար-խումար, ջա՛ն
փինջանո,

Մեռնիմ բոյին 56 սիրուն չինար, հո՛յ Նա-
րինո,

Նա՛յ-նա՛յ, հո՛ւ-նա՛յ, փինջանո, ջան
Նարինո:

Նարինո՛ ջան, փինջանո, հէ՛յ ֆինջանո,
Մեր տան քօշկը 57 քեռտսուն կարաս,
ջա՛ն Նարինո,

Ձեր տան քօշկը քեռտսուն կարաս, հո՛յ
փինջանո,

Քեռտսուն կարսի գինին է խաս 58, ջա՛ն
Նարինո,

Օսկէ գիւղում 59, էրծթէ թաս 60, հէ՛յ
ֆինջանո,

Գինին լցեմ օսկէ թաս, ա՛յ ջա՛ն Նարինո,
չըմէն 61 թասին պաշիկ 62 մը տաս, ջա՛ն
Նարինո,

Նա՛յ-նա՛յ, հո՛ւ-նա՛յ, փինջանո, ջա՛ն
Նարինո:

Նարինո՛ ջան, փինջանո, հէ՛յ ֆինջանո,
ին կասուտակ ծով աչկերը, հէ՛յ փին-
ջանո,

էրված սրտիս կրակ կու տայ, հո՛յ Նա-
րինո,

Նա՛յ-նա՛յ, հո՛ւ-նա՛յ, փինջանո, ջա՛ն
Նարինո:

Նարինո՛ ջան, փինջանո, հէ՛յ ֆինջանո,
Եարս համ բիւլբիւլ 63, համ գիւլ ա, հո՛յ
փինջանո,

54 Գարուն:

55 Գոյնգոյն:

56 Հասակ:

57 Գինի պահելու համար առանձին սենեակ,
անկիւն:

58 Ագնիւ:

59 Պղնձէ գինու մեծ աման:

60 Գաւաթ, բաժակ:

61 Ամէն:

62 Համբոյր:

63 սոխակ:

էկու տեսիր, ի՛նչ խօրօտիկ ա, հէ՛յ Նա-
րինօ,
Նա՛յ-նա՛յ, հօ՛ւլ-նա՛յ, Փինջանօ, ջա՛ն
Նարինօ: — — —

Ժողովրդական գրականութեան ամե-
նագեղեցիկ գոհարներից կարելի է համա-
րել «Լուսնակ գիշեր» եւ «Նս մի աղուոր
տեսի» խորագրով գողտրիկ, փոքրիկ սի-
րերգները, որոնց մէջ փայլում է արեւ-
ելեան բանաստեղծութեան ջերմութիւնն
ու պատկերաւորութիւնը: Թէ այդ սիրերգ-
ները, ո՞ր գաւառին են պատկանում,
գիտեմք է գրականապէս ասել, որովհետեւ
նոյնպէս բարբառները զանազան են: Շատ
հաւանական է նրանք Ալաշկերտի կամ Շի-
րակի վտուռուն եւ գունագեղ երեւակայու-
թեամբ օժտուած հայ ժողովրդի ստեղծա-
գործութիւններն են: Գլխաւորապէս կրում
են այդ գաւառների ժողովրդական բանա-
հիւսութեան յատուկ ոճն ու կնիքը: Ահա
այդ փոքրիկ սիրերգները.

Լուսնակ գիշեր,
Շամամ ծծեր.
Գացի տեսայ,
Թոնիր կշտին,
Եարս նստած՝
Թեւեր սօթած՝
Ալուր մաղէր,
Ջուխտ ⁶⁴ շամամը
Գօշին ⁶⁵ խաղէր:

կամ՝

Ես մի աղուոր տեսի,
Աչքերը նման ծովի.
Ռանգը ⁶⁶ վարդ-արեւի,
Արեգից էլ աղուոր տեսի:

Յօնքերը զոյգ աղեղ,
Բուրմունքը վարդաեղ.
Պոռքը ⁶⁷ շաքարով լի,
Բերանից մեղր կու թափի,
— Էդ աղուորը ինձ եար արի:

Այս թանկագին փշրանքները գրի ա-
ռինք 1917 թուին, Նոր-Ջուղայում, Ալաշ-

կերտցի Վարդէս Արրահամեան անունով
անգրագէտ մի գեղջուկից, որ երկար տա-
րիներ ապրել է Վանի, Խնուսի եւ Ապարանի
գաւառամասերում: Նա անգիր է երգում
ժողովրդական մի շարք երգեր եւ պատմում
հէքեաթներ, առասպելներ ու պատմու-
թիւններ:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ



ՂԱՐԱՐԱՅԻ ԲԱՐՔԵՐԻՆ

Ա.

Ղարաբաղցիների օրհնութիւնը:

Աղգդ որհնվի, տիլարի ¹,
Աղբաթդ խեր ինի.
Անըմըտ մժանա,
Աչքդ լուսաւ կենա.
Աստուծ պահի քեզ,
Աստուծ օրհնի քեզ
Ասծու աչքին քաղցր իրեւա
Աստուծ դորմի քու հօրն ու մօրը.
Աստուծ քեզ մին հալալ ծծկեր նասիր անի.
Աստուծ քեզ մին զոչ վերթի տա
Աստուծ օխտըտ կտարի
Աստուծ քեզ շատ ժառանգ տա,
Բալեքդ ապրին,
Բախտապիւր ինի ²,
Բինադ ալադ ինի ³.
Եաշըտ ⁴ շատ շատ ինի
Եկըտ ⁵ համեշտ առատ ինի
Եղ ու մեղրտ բոլ ինի
Զրթարված ինիս համեշա,
Զրալար ⁶ ինիս
Էշխալ ժառանգ ինիս.
Էրվի դուշմնդ
Ըստուծանա մխիթարիս
Թաշախուստդ պեցուր ինի,
Ժառանգդ բարի ինի.
Իխտիարդ շատ ինի,
Իրավունքդ շատ ինի.

¹ Աճել:

² Լինիս:

³ Լինի:

⁴ Կեանքը:

⁵ Բերքդ, եկամուտ:

⁶ Զօրեղ:

⁶⁴ Զոյգ:

⁶⁵ Կուրծք:

⁶⁶ Գոյն:

⁶⁷ Շրթերը: